ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1280-Ա « 08 » ապրիլի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆԱՏԱԼՅԱ ՍԻՆՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՕՀԱՅՈ ՆԱՀԱՆԳԻ ՔԼԻՎԼԵՆԴ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նատալյա Սինորյանի 07.04.2025 թվականի № Դ-37138-25 դիմումը և Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատնից ստացված հրավերը՝ Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի վերաբերյալ «Բաց աշխարհ» ծրագրին մասնակցելու նպատակով.

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Երևան քաղաքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նատալյա Սինորյանը՝ 2025 թվականի մայիսի 7-ից 17-ը գործուղվելու է Ամերիկայի Միացյալ Նահանգների Օհայո նահանգի Քլիվլենդ քաղաք.

2) Երևան քաղաքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նատալյա Սինորյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը՝ բացառությամբ օրապահիկի, որն իրականացվում է Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

2. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ